TRANSPARENCY INTERNATIONAL
the global coalition against corruption

Լրացուցիչ տեղեկություններ

Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2009թ. կոռուպցիայի ընկալման համաթիվը

Ընդհանուր տվյալներ

Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) դասակարգում է երկրները/տարածքները՝ ելնելով նրանից, թե տվյալ երկրի պետական ծառայողների եւ քաղաքական գործիչների շրջանում առկա կոռուպցիայի ինչպիսի մակարդակ է ընկալվում հարցվողների կողմից: Այն բաղադրյալ համաթիվ է, այլ կերպ ասած, հարցումների հարցում է, որը ստացվում է տարբեր, անկախ եւ իրենց բնագավառներում ճանաչում ունեցող հաստատությունների կողմից գործարարների եւ փորձագետների շրջանում անցկացված հարցումների՝ կոռուպցիային առնչվող տվյալներից: ԿԸՀ-ն արտացոլում է աշխարհում առկա կարծիքները, ներառյալ նաեւ այն փորձագետներինը, ովքեր բնակվում են գնահատվող երկրներում/տարածքներում:

ԿԸՀ տեսանկյունից ինչպե՞ս է սահմանվում կոռուպցիան:

ԹԻ-ի ԿԸՀ-ն իր ուշադրությունը կենտրոնացնում է հանրային ոլորտում տիրող կոռուպցիային: ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվող հարցումներում տրվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են անձնական օգուտ ստանալու նպատակով պաշտոնեական դիրքի չարաշահմանը: Առաջադրված հարցերի թվում են պետական պաշտոնյաներին կաշառելը, պետական գնումների գործընթացներում պայմանագրի գումարից «կիսվելը», պետական միջոցներ յուրացնելը կամ էլ հարցեր, որոնց միջոցով ստուգվում է տվյալ երկրի հակակոռուպցիոն քաղաքականության ազդեցությունն ու արդյունավետությունը, եւ դրանով իսկ ընդգրկվում է եւ՛ վարչական, եւ՛ քաղաքական կոռուպցիան:

Ինչո՞ւ է ԿԸՀ-ն հիմնվում միայն ընկալման վրա:

Փաստական նյութի, այն է՝ տրվող կաշառքների չափերի կամ քրեական հետապնդումների կամ էլ դատական գործերի քանակի համեմատության հիման վրա դժվար է գնահատել տարբեր երկրներում/տարածքներում կոռուպցիայի ընդհանուր մակարդակը: Օրինակ, քրեական հետապնդման կամ դատական գործերի վրա հիմնված համեմատական տվյալները չեն արտացոլում կոռուպցիայի իրական մակարդակը, այլ միայն արտացոլում են տվյալ երկրի դատախազական, դատական մարմինների եւ/կամ զանգվածային լրատվամիջոցների կողմից կոռուպցիոն հանցագործությունների հետաքննման և վեր հանման արդյունավետությունը: Հետեւաբար, ըստ երկրների տվյալների հավաքագրման առավել վստահելի մեթոդ է հանդիսանում յուրաքանչյուր երկրում կոռուպցիոն իրականության հետ առավել ուղղակիորեն շփվող անձանց փորձի եւ ընկալումների վրա հիմնվելը:

Ինչպե՞ս են ֆինանսավորվում ԿԸՀ հաշվարկման աշխատանքները:

Թրանսփարենսի Ինթերնեշնլը ֆինանսավորում է ստանում տարբեր պետական գործակալություններից, միջազգային հիմնադրամներից եւ կորպորացիաներից, որոնց ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր է դառնում ԿԸՀ հաշվարկը (դոնորների ամբողջական ցուցակին ծանոթանալու համար այցելե՛ք http://www.transparency.org/support_us/support): ԿԸՀ եւ ԹԻ-ի համաշխարհային այլ համաթվերի չափման համար լրացուցիչ աջակցություն է ցուցաբերում «Էռնստ էնդ Յանգ» ընկերությունը: Ընդունելով որեւէ ընկերության ֆինանսական աջակցությունը՝ ԹԻ-ն, այնուամենայնիվ, չի աջակցում նրա քաղաքականությանը եւ չի ընդգրկում որեւէ աջակցողի իր ծրագրերի կառավարման գործընթացներում:

Մեթոդաբանություն

Քանի՞ երկիր/տարածք է ընդգրկված ԿԸՀ դասակարգման մեջ:

2009թ. ԿԸՀ դասակարգման մեջ ընդգրկված է 180 երկիր/տարածք, այնքան, որքան 2008-ին:

Ի՞նչ սկզբունքով են երկրները/տարածքներն ընտրվում ԿԸՀ դասակարգման մեջ ընդգրկվելու համար:

Տվյալ երկիրը կամ տարածքը ԿԸՀ դասակարգման մեջ ներառելու համար անհրաժեշտ է, որպեսզի այն ընդգրկված լինի կոռուպցիայի հետ առնչվող՝ տվյալներ պարունակող առնվազն երեք վստահելի հարցումներում: Համաթվի ցանկում տվյալ երկրի ներառվելը չի նշանակում կոռուպցիայի առկայություն այդ երկրում. այն ընդամենը արտացոլում է այդ երկրի վերաբերյալ համապատասխան տվյալների նվազագույն անհրաժեշտ ծավալի պահանջի բավարարումը:

Ինչո՞ւ որոշ երկրներ/տարածքներ այլևս ընդգրկված չեն ԿԸՀ 2008թ. դասակարգման ցուցակում եւ ինչո՞վ է պայմանավորված նոր երկրների/տարածքների ներառումը ցուցակում:

Երկրները/ տարածքները համաթվի դասակարգման մեջ ընդգրկվում են տվյալների առնվազն երեք աղբյուրի առկայության պարագայում: Այս տարվա ԿԸՀ դասակարգման մեջ ներառվել է Բրունեյ Դարուսալամը, իսկ Բելիզը դուրս է թողնվել ընդամենը մեկ հարցման մեջ ներառված լինելու պատճառով:

Որո՞նք են ԿԸՀ հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների աղբյուրները:

2009թ. ԿԸՀ-ն հիմնված է 11 անկախ կազմակերպությունների կողմից անցկացված 13 հարցումների եւ ուսումնասիրությունների վրա: Դասակարգման մեջ ընդգրկված լինելու համար տվյալների աղբյուրները պետք է հրապարակված լինեն անցած 2 տարվա ընթացքում: Բոլոր աղբյուրներում պետք է ներկայացված լինի ուսումնասիրության մեջ ներառված երկրների/տարածքների դասակարգումը և չափված լինի կոռուպցիայի տարածվածության ընդհանուր աստիճանը: Այս պայմանը բացառում է այնպիսի հարցումների տվյալների օգտագործումը, որոնք կոռուպցիայի հետ մեկտեղ ուսումնասիրում են նաեւ այլ հարցեր, ինչպիսիք են, օրինակ, քաղաքական անկայունությունը, ապակենտրոնացումը կամ ազգայնականությունը: ԹԻ-ն ջանում է երաշխավորել օգտագործված աղբյուրների ամենաբարձր որակը եւ հարցումների բացարձակ մաքրությունը և դրանք անցկացնողների բարեխղճությունը: ԿԸՀ հաշվարկի նպատակով օգտագործվելու համար տվյալները պետք է լինեն լավ փաստագրված, եւ նրանց հավաքագրման մեթոդաբանությունը պետք է լինի բացատրելի՝ հնարավորություն տալու գնահատելու այդ տվյալների հուսալիությունը:

Որոշ կազմակերպություններ, որոնք ԿԸՀ գնահատման համար անվճար տվյալներ են տրամադրում ԹԻ-ին, թույլ չեն տալիս իրենց կողմից ներկայացված տվյալների հրապարակումը, քանի

որ նրանց գնահատականները հասանելի են միայն բաժանորդագրվածների համար: Մյուս հաստատությունների տրամադրած տվյալները հրապարակային են եւ մատչելի: 2009թ. ԿԸՀ հաշվարկի համար օգտագործված հարցումների աղբյուրների ամբողջական ցուցակի, տրված հարցերի եւ հարցվողների թվի մանրամասների հետ ծանոթանալու համար տե՛ս ԿԸՀ մեթոդաբանության նկարագրությունը http://www.transparency.org/cpi հասցեում:

Ո՞ւմ կարծիքն է հաշվի առնվում ԿԸՀ հաշվարկի համար օգտագործվող հարցումներում:

ԿԸՀ արժեքներում արտացոլված հարցվածների փորձը հիմնված է եւ՛ զարգացած արդյունաբերական, եւ՛ զարգացող երկրներում կոռուպցիոն գործելակերպի նրանց ըմբռնման վրա: Հարցումներն անցկացվել են գործարարների եւ տվյալ երկրի գծով փորձագետների շրջանում: ԿԸՀ հաշվարկի համար տվյալների աղբյուրներ են հանդիսացել տվյալ երկրում բնակվող և այնտեղ մշտապես չբնակվող փորձագետները: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ տվյալ երկրում մշտապես բնակվող եւ չբնակվող փորձագետների տեսակետները զգալիորեն համընկնում են:

Ինչպե՞ս է կազմվել 2009թ. ԿԸՀ-ն:

2009թ. ԿԸՀ-ն կազմվել է Բեռլինում տեղակայված Թրանսփարենսի Ինթերնեշնլի քարտուղարության կողմից; ԹԻ-ն հավաքագրել է տվյալները, կապվել է այդ մեթոդաբանության գծով փորձագետների հետ եւ հաշվարկել է համաթիվը: Նախորդ տարիներին այս աշխատանքը կատարվում էր ԹԻ-ի խորհրդատուի եւ ավագ խորհրդականի կողմից: ԹԻ-ն կիրառում է ճշգրիտ մեթոդ վերջնական արդյունքների խաչաձեւ ստուգման համար՝ համագործակցելով առաջատար համալսարանների եւ ինստիտուտների մի շարք փորձագետների հետ: ԿԸՀ մեթոդի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք ծանոթանալ ԿԸՀ մեթոդաբանության հետ՝ այցելելով www.transparency.org/cpi:

Եղե՞լ են, արդյոք, փոփոխություններ ԿԸՀ մեթոդաբանության մեջ 2009թ.:

Ընդհանուր առմամբ, 2009թ. ԿԸՀ-ն հաշվարկվել է նույն մեթոդով, ինչ նախորդ տարիներին: Միակ ոչ էական փոփոխությունն այն է, որ 2009թ. ԿԸՀ-ն հաշվարկելիս նախորդ 2008 թ. համաթիվը ծառայել է որպես բազային համաթիվ (ամբողջական մեթոդի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2008/methodology: ԿԸՀ-ն հաշվարկելիս այս մոտեցումն արդեն կիրառվել է նախկինում (մինչև 2006թ. ներառյալ): 2007 եւ 2008 թվականների ԿԸՀ հաշվարկելիս նույնպես օգտագործվել են նախորդ տարիների արդյունքները, սակայն դրանք նաև բերվել են համապատասխանության հաջորդ տարվա համաթվերի հետ: Այս մասին լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու համար տե՛ս http://transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2007:

Փոփոխություններ 2008 եւ 2009 թվականների արժեքների միջեւ

Կարելի՞ է, արդյոք, տվյալ երկրի 2009թ. ԿԸՀ արժեքը համեմատել այդ երկրի նախորդ տարիների ԿԸՀ արժեքի հետ:

Համաթիվը տալիս է ընթացիկ տարում կամ նախորդ տարիներին գործարարների եւ տվյալ երկրի գծով փորձագետների կարծիքների ընդհանուր համապատկերը: Պայմանավորված կիրառվող

մեթոդաբանությամբ՝ ԿԸՀ-ն այն գործիքը չէ, որը կիրառելի կլինի առաջընթացը կամ դրա բացակայությունը երկարաժամկետ կտրվածքով մոնիտորինգի ենթարկելու համար: Ժամանակի ընթացքում տվյալ երկրի համաթվի արժեքներն իրար հետ համեմատելու միակ հուսալի ձեւն առանձին հարցումների տվյալներն ուսումնասիրելն է, որոնցից յուրաքանչյուրը կարող է արտացոլել գնահատման մեջ փոփոխությունը:

Երկրի/տարածքի համաթվի արժեքի տարեցտարի փոփոխությունները կարող են լինել կամ տվյալ երկրում կոռուպցիայի հետ կապված իրավիճակի ընկալումների փոփոխության կամ օգտագործվող աղբյուրներում դասակարգման փոփոխության կամ էլ հենց ԿԸՀ-ի հաշվարկի մեթոդաբանության փոփոխության հետեւանք: Որտեղ որ դա հնարավոր է, ԹԻ-ն վեր է հանել ԿԸՀ արժեքներում այն փոփոխությունները, որոնք կարող են բխել աղբյուրներում տեղ գտած փոփոխություններից:

Ո՞ր երկրների/տարածքների ԿԸՀ արժեքներն են առավել զգալի չափով վատացել:

Ինչպես արդեն նշվել է, ԿԸՀ հաշվարկման մեթոդաբանությունն այնքան էլ հարմարեցված չէ ԿԸՀ արժեքներն ըստ տարիների համեմատելու համար: Սակայն, այնքանով, որքանով այդ փոփոխությունները հնարավոր է արձանագրել առանձին աղբյուրներում, կարելի է վեր հանել որոշակի միտումներ:

2009թ. 2008-ի համեմատությամբ ԿԸՀ արժեքներում հետընթացի ցայտուն օրինակներ են Բահրեյնը, Հունաստանը, Իրանը, Մալայզիան, Մալթան և Սլովակիան, որոնց պարագայում նրանց վերաբերյալ աղբյուրների կեսից ավելիում արձանագրվել է նահանջ: Այս դեպքերում կարելի է եզրակացնել, որ վերջին երկու տարվա ընթացքում կոռուպցիայի մակարդակների վերաբերյալ փորձագետների և գործարարների ընկալումներում փոփոխություններ են տեղի ունեցել:

Ո՞ր երկրների/տարածքների ԿԸՀ արժեքներն են առավել զգալի չափով լավացել:

Հենվելով վերը նշված նկատառումների և այն աղբյուրների տվյալների վրա, որոնք կանոնավոր կերպով օգտագործվել են ԿԸՀ հաշվարկի համար, կարելի է նշել այն երկրները, որոնք 2009թ. գրանցել են առաջընթաց 2008-ի համեմատ: Դրանք են Բանգլադեշը, Բելառուսը, Գվատեմալան, Լիտվան, Մոլդովան, Չեռնոգորիան, Լեհաստանը, Սիրիան և Տոնգան:

ԿԸՀ-ի մեկնաբանությունը

Ո՞րն է ավելի կարևոր՝ երկրի/տարածքի զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման մեջ, թե՞ նրա ԿԸՀ արժեքը:

Երկրի/տարածքի ԿԸՀ արժեքը ցույց է տալիս երկրում կոռուպցիայի ընկալված մակարդակը, իսկ երկրի դիրքը ԿԸՀ դասակարգման ցանկում՝ նրա դիրքը դասկարգման մեջ ներառված այլ երկրների համեմատ: Երկրում կոռուպցիայի ընկալման մակարդակի շատ ավելի կարևոր ցուցանիշ է ԿԸՀ արժեքը: Երկրի զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման ցանկում կարող փոխվել պարզապես նաև այն պատճառով, որ այդ ցանկում հայտնվում են նոր երկրներ կամ նախկին երկրներից մի քանիսը դուրս են մնացել դրանիից:

ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող երկիրը/տարածքը հանդիսանո՞ւմ է, արդյոք, աշխարհի ամենակոռումպացված պետությունը:

Ոչ: ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող երկիրը/տարածքն այն երկիրը/տարածքն է, որում կոռուպցիայի մակարդակն ընկալվում է որպես ամենաբարձրը *ԿԸՀ ցանկում ընդգրկված*

երկրների/տարածքների մեջ: Ներկայումս աշխարհում կա 200-ից ավելի անկախ պետություն, իսկ 2009թ. ԿԸՀ դասակարգման ցանկում ներառված է նրանցից 180-ը: ԿԸՀ-ն ոչ մի տեղեկություն չի տալիս այն երկրների/տարածքների վերաբերյալ, որոնք այդ ցանկում ընդգրկված չեն: Ավելին, ԿԸՀ-ն վարչական և քաղաքական կոռուպցիայի ընկալման գնահատականն է. այն պետությունների կամ հասարակությունների, որպես ամբողջություն, կոռումպացված լինելու դատավճիռ չէ: ԿԸՀ դասակարգման ստորին հորիզոնականներում գտնվող երկրների հասարակությունները նույնքան մտահոգ են և նույնքան քննդատական կոռուպցիայի նկատմամբ, ինչպես վերին հորիզոնականներում գտնվող երկրների/տարածքների հասարակությունները:

Ինչո՞ւ հակակոռուպցիոն բարեփոխումների կամ վերջերս տեղի ունեցած կոռուպցիոն սկանդալների ազդեցությունը (կամ դրա բացակայությունը) միշտ չէ, որ արտացոլվում է ԿԸՀ արժեքի վրա:

Դժվար է կարճատև ժամանակամիջոցում բարելավել ԿԸՀ արժեքը: 2009թ. համաթիվը հիմնված է վերջին երկու տարիների տվյալների վրա և կապված է այն ընկալումների հետ, որոնք, հնարավոր է, որ ձևավորվել են ավելի վաղ անցյալում: Սա նշանակում է, որ կոռուպցիայի ընկալման մեջ էական փոփոխությունները հնարավոր է, որ ի հայտ գան միայն ավելի երկար ժամանակահատվածում:

ԿԸՀ հանդիսանո՞ւմ է, արդյոք, երկրի/տարածքի հանրային ոլորտի կոռումպացվածության ընկալման հուսալի ցուցանիշ:

ԿԸՀ-ն հանդիսանում է հանրային ոլորտի կոռումպացվածության ընկալման չափման վստահելի գործիք: Որպես այդպիսին, այն ստուգվել և լայնորեն կիրառվել է և՛ գիտնականների, և՛ փորձագետների կողմից: Սակայն, ԿԸՀ հուսալիության աստիճանը երկրից երկիր տարբեր է: Մեծ թվով աղբյուրներով և այդ աղբյուրների կողմից օգտագործվող գնահատման մեթոդների միջև առկա փոքր տարբերություններով (որը բնութագրվում է վստահելիության ավելի նեղ տիրույթով) բնութագրվող երկրների ԿԸՀ արժեքները և գրաված տեղը ԿԸՀ դասակարգման մեջ ավելի ճշգրիտ են և ընհակառակը:

ԿԸՀ-ն հանդիսանո՞ւմ է, արդյոք, հուսալի չափորոշիչ օգնության տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման գործում:

Որոշ կառավարություններ փորձում են օգտագործել ԿԸՀ արժեքները՝ որոշելու համար, թե որ երկրներին/տարածքներին կարելի տրամադրել օգնություն, իսկ որոնց՝ ոչ: ԹԻ-ն չի քաջալերում ԿԸՀ այս կերպ օգտագործումը: Չի կարելի խաչ քաշել շատ կոռումպացված ընկալվող երկրների վրա: Ընդհակառակը, նրանց պետք է օգնել՝ դուրս գալու կոռուպցիա-աղքատություն փակ շրջանից: Եթե ենթադրվում է, որ տվյալ երկիրը կոռումպացված է, ապա այդ փաստը պետք է դոնորների համար ազդանշան ծառայի, որ անհրաժեշտ է ցուցաբերել համակարգված մոտեցումներ կոռուպցիայի դեմ պայքարում, որը հիմնված կլինի փոխադարձ հաշվետվողականության վրա: Բացի այդ, եթե դոնորները մտադիր են աջակցելու լայնածավալ զարգացման ծրագրերին այնպիսի երկրներում, որոնք ընկալվում են որպես կոռումպացված, ապա նրանք այդ երկրներում պետք է հատուկ ուշադրություն դարձնեն «կարմիր դրոշների» վրա և համոզվեն, որ գործի կդրվեն վերահսկողության համապատասխան մեխանիզմներ: